

- 103 Նաեւ պանդուխտ կալս ի մէջ այլազանց,
Անծանօթութիւնս տեղւոյս բընակչաց,
Անհրմուտ գոյն իմ կողմանցըս լեզուաց
Կենցաղավարման, ծիսից ւ՛րարմանց:
- 104 Սոյնք եւ նըմանիք սոցին բովանդակ
Նիւթէին սըրտիս ցաւ առ հասարակ
Ուստի բանաւոր փաստիւ համարձակ
Ողբայի լալով զիմ դաստիարակ:
- 105 Եւ թէպէտ տեղւոյս Արամեանք շքեղ
Մըխիթարէին զիս բանիւ համեղ,
Այլ զըրոյց նոցին շէր դեղ ինչ զօրեղ
Առ մեղկել զաղէսս, բուժել զիմ քաղցկեղ:
- 106 Այսպէս զաւուրս ինչ մորմոքեալ սըրտիւ
Եղուկ ինձ ձայնեալ, Հօրս՝ ափսոս կոծիւ,
Կամաց Բարձրելոյն տեւեալ փառս պատիւ՝
Անգորրէի զիս նորին իսկ շիրմիւ:
- 107 Որպէս եւ առնեմ ցայսօր ըզնոյն բան,
Միշտ ծառայելով յայս մեր ժամատան,
Ուր ըսփոփանք իմ նախագասական՝
Է գերերջանիկ Հօրրս դամբարան:
- 108 Ի վերայ շիրմին կափարչի վիմի
Վերտառութիւն ինչ ի նըմին վայրի
Շարագրեալ յինէն քանդակիւր ըզ՞կնի՝
Ի գովեստ ազնիւ բաբունւոյս քաջի:
- 109 Սարգսի ըզպատկերն իսկ կենդանագիր
Նըկարել ետու աստ նախ փոքրագիր
Որ յետոյ զարդուք Տեսչի մեծագիր
Օրինակեցաւ ի գըրչէ ընտիր: